ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. **N----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՐՎԵՍՏԻ ԱՅԲՈՒԲԵՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի (այսուհետ՝ նաև հիմնադրամ) տնօրենի գրությունը, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետով, 25-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի կողմից ներկայացված Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի կազմից հետ վերցնել Երևան քաղաքի Ազատության պողոտա հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքը՝ 3100.7 քառ. մետր մակերեսով և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.18135 հեկտար հողամասը:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագիրն իրականացնելու նախապայմանով՝ սույն որոշման 2-րդ կետում նշված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (վկայական 17.07.2013թ. N17072013-01-0231) անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամին՝կնքելով գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում նախատեսելով պատասխանատվություն՝ հիմնադրամի կողմից ստանձնած պարտավորությունները (մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագիրը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել լուծարման հանձնաժողով:

6. «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՎԵՍՏԻ ԱՅԲՈՒԲԵՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի տնօրենը Երևանի քաղաքպետին հասցեագրված 23.01.2017 թվականի գրությամբ խնդրել է Երևանի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող «Արաբկիր» մշակութային կենտրոնի շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել հիմնադրամին: Գրությանը կից ներկայացվել է Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագիրը, որի համաձայն նախատեսվում է շենքի վերանորոգման և արդիականացման համար ներդնել 480 000 000 ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ և 10 տարվա ընթացքում կյանքի կոչել ներկայացված ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է կենտրոնում իրականացնել մշակութային գործունեություն հետևյալ ուղղություններով՝ թատրոն, պարարվեստ, կերպարվեստ, երաժշտության և մեդիա ոլորտ: Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքն է ստեղծել ժամանակակից, միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխան մշակութային կենտրոն՝ հարմարավետ դահլիճներով և ժամանակակից տեխնիկայով հագեցած: Ակնկալվում է նաև նոր աշխատատեղերի ստեղծում:

Երևանի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող շենքը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, որը ամրացված է «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը: Շենքը գտնվում է ոչ այդքան բարեկարգ վիճակում և իր նպատակին ծառայելու համար ունի հիմնանորոգման, նյութատեխնիկական բազայի բարելավման և արդիականացման անհրաժեշտություն, որի համար պահանջվում է զգալի ֆինանսական միջոցների ներդրում: Թեև շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված է «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, սակայն այդ կազմակերպությունը չունի հնարավորություն և համապատասխան ֆինանսական միջոցներ այդ աշխատանքներն իրականացնելու համար, ըստ որի էլ հնարավոր չէ մշակույթի կենտրոն հաճախողների թվաքանակն ավելացնել և պատշաճ ապահովել Երևան համայնքի բնակչության, մասնավորապես՝ մանուկների և պատանիների գեղարվեստական կրթությունն ու գեղագիտական զարգացումը: Այդ հանգամանքների հանրագումարը բերում է նրան, որ կազմակերպությունը չի կարողանում իրականացնել իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և գործունեությունը:

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի կողմից ներկայացված ծրագիրը հավանության արժանացնելու պարագայում, անհրաժեշտ է «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից հետ վերցնել

կազմակերպությանն ամրացված Երևանի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող գույքը և այն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամին:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը չի կարողանում իրականացնել իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները, ուստի այդ կազմակերպության հետագա գործունեությունը դառնում է աննպատակահար, հետևաբար ենթակա է լուծարման:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման, արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանման ու զարգացման, այդ թվում՝ տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտման, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովման կարևորությունը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՎԵՍՏԻ ԱՅԲՈՒԲԵՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՎԵՍՏԻ ԱՅԲՈՒԲԵՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, «ԱՐԱԲԿԻՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 31-ի
N----Ա որոշման

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագիր

I. Մշակութային գործունեության նկարագիր

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամը ժանրային առումով նախատեսում է հետևյալ ծրագրերի իրագործումը.

- Թատրոն - «Արաբկիր» մշակութային կենտրոնը կունենա ժամանակակից լուսային և ձայնային սարքավորումներով հագեցած թատերական դահլիճ, որոնք ապահովված կլինեն նաև տարատեսակ տեխնիկական հնարքների իրագործման համար կիրառվող՝ ներկայիս միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխան տեխնիկայով: Թատրոնին կից կգործեն թատերական ստուդիա և թատերական խմբակներ՝ շնորհալի երիտասարդների ու պատանի թատերասերների ուսուցանման համար: Կլինեն նաև մանկական ասմունքի խմբակներ:

- Պարարվեստ – նախատեսվում է ունենալ նորագույն ոճով, գեղեցիկ կահավորված պարային դահլիճ, ինչպես նաև փորձասենյակներ, որտեղ երիտասարդ և տաղանդավոր պարուսույցների ղեկավարությամբ իրենց պարապմունքները կանցկացնեն թե՛ պարային համույթները (այդ թվում՝ ժողովրդական, պարահանդեսային, ժամանակակից պարերի և այլն), թե՛ շնորհաշատ պատանիներն ու աղջիկները: Այս ասպարեզում ևս չեն անտեսվի երեխաները, կգործեն մանկական տարբեր պարային խմբեր:

- Երաժշտարվեստ - նախատեսվում է «Արաբկիր» մշակութային կենտրոնում ստեղծել երաժշտական ստուդիա՝ հագեցած ձայնագրման սարքավորումներով, որոնք հնարավորություն կտան կատարյալ լսելիությամբ (ակուստիկայով) ձայնագրելու կենդանի ձայնը: Կիրականացվեն ձայնագրման և գործիքավորման աշխատանքներ, երաժշտական ձևավորում և այլն:

- Կերպարվեստ – ենթադրվում է ստեղծել նկարչական արվեստի այբուբենը սովորեցնող նկարչական ստուդիա, որտեղ այդ գեղեցիկ արվեստի նրբերանգները սկսնակների և նկարչությամբ զբաղվել ցանկացողների առջև կբացահայտեն ինչպես ճանաչված, այնպես էլ՝ երիտասարդ և տաղանդավոր նկարիչները, իսկ տարիքով փոքրերի համար կգործեն նկարչական խմբակներ:

- Մեդիա ոլորտ – այսօրվա մեր կյանքը հնարավոր չէ պատկերացնել առանց հեռուստատեսության և ինֆորմացիա սփռող այլ միջոցների: Այդ նպատակով նախատեսվում է ստեղծել նաև մեդիա կառույցներում աշխատելու համար պիտանի կադրերի դարբնոց, մասնավորապես՝ հաղորդավարական դասընթացներ, պատանի հեռուստալրագրողների խմբակներ և այլն, որտեղ առաջին քայլերն անող պատանիների ու երիտասարդների շարքում ի հայտ եկած լավագույն կադրերն իրենց տեղը կգտնեն մեդիա ասպարեզում:

- Մշակույթի կենտրոնը նախատեսվում է դարձնել նաև մշակութային բարձր արժեքների տարածման և պրոպագանդման վայր: Այդ նպատակով ոչ միայն կկազմակերպվեն ցուցահանդեսներ, այլև վարձակալությամբ տարածքներ կտրամադրվեն անհատներին, ովքեր իրականացնում են մշակութային ծրագրեր կամ աջակցում են դրանց: Վարձակալությամբ տարածքներ կտրամադրվեն նաև մշակութային տարբեր ժանրերում գործող խմբակներ ղեկավարող անձանց:

II. Վերանորոգման աշխատանքների ցանկ (այսուհետ՝ Աշխատանքներ)

1. **Շենքի տանիքի վերանորոգում՝**
    - Տանիքի ծածկի վնասված թիթեղների փոխում և մասնակի վերանորոգում, թիթեղի ներկածածկ շերտի վերականգնում
    - Տանիքի անձրևաջրերի հեռացման համակարգի վերանորոգում և ջրատարների աշխատանքի վերականգնում
    - Տանիքի փայտյա հիմքի վերանորոգում, որոշակի հատվածներում փայտյա հեծանների փոխարինում մետաղականով
    - Տանիքի օդափոխության համար նախատեսված օդանցքների վերանորոգում և օդափոխության բնականոն աշխատանքի վերականգնում
    - Տանիքի հատակի ջերմամեկուսիչ շերտի վերականգնում:

2. **Շենքի արտաքին տեսքի վերականգնում՝**

- Պատերի վնասված հատվածների վերանորոգում, հնարավորինս նախկին տեսքի ապահովվում
- Շենքի արտաքին մուտքերի վերանորոգում, դռների փոխարինում, վերանորոգում և երեսապատում, փականների վերանորոգում
- Շենքի լուսամուտների փոխարինում մետաղապլաստե երկշերտապակյա լուսամուտներով
- Արտաքին լուսավորության ապահովվում
- Շենքին հարակից տարածքի բարեկարգում
- Շենքի դիմացի մուտքի աստիճանների վերանորոգում
- Շենքի հարակից տարածքի կանաչ գոտու վերականգնում, ոռոգման ջրատարհամակարգի ստեղծում:

3. **Շենքի գազաֆիկացում՝**
   - Շենքի գազաֆիկացման աշխատանքների կազմակերպում համապատասխան մարմինների հետ, փաստաթղթային անհրաժեշտ աշխատանքների ապահովվում
   - Գազատար ենթակայանի կառուցում և գազի մուտքը շենք հասցնելու խողովակաշարի անցկացում
   - Շենքում գազաֆիկացման աշխատանքների անցկացում, անվտանգության բոլոր նորմերի ապահովմամբ:

4. **Շենքի էլեկտրաֆիկացում՝**
   - Շենք մտնող եռաֆազ հոսանքի ենթակայանների վերականգնում, բաշխից վահանակների վերականգնում և վերանորոգում, անվտանգության նորմերի ապահովվում
   - Էլբաշխիչ վահանակներում ըստ էլօգտագործման սեգմենտների համապատասխան հզորությունների անջատիչների մոնտաժում
   - Շենքի ամբողջ տարածքում հին էլեկտրական լարերի ապամոնտաժում և նոր լարերի մոնտաժում
   - Ըստ օգտագործման սեգմենտների հին էլբաշխիչ տուփերի ապամոնտաժում և նորերի մոնտաժում
   - Հին էլվարդակների ապամոնտաժում և նորերի մոնտաժում
   - Հին էլլուսավորման սարքերի ապամոնտաժում և նորերի մոնտաժում
   - Մեծ սրահներում և շքամուտքերում համապատասխան հզորության էլեկտրական լարերի անցկացում և լուսավորության համապատասխան հզորությունների ապահովվում:

5. **Ջրամատակարարման համակարգի ստեղծում՝**

- Ջրամատակարարման նպատակով համապատասխան տրամաչափի մետաղապլաստե խողովակների մոնտաժում ամբողջ շենքում, նախկին մետաղյա խողովակների ապամոնտաժում
- Կոյուղու համակարգի ստեղծում պլաստմասե համապատասխան տրամաչափի խողովակներով, նախկին չուգունե կոյուղու համակարգի ապամոնտաժում
- Նկուղային հարկում և շենքի արտաքին տարածքում կոյուղու համակարգի վերանորոգում, ջրատարների աշխատանքի վերականգնում
- Սանհանգույցների նորոգում, լվացարանների, ծորակների, զուգարանակոնքերի և այլ անհրաժեշտ սարքավորումների մոնտաժում, նախկին հին համակարգերի ապամոնտաժում
- Կենտրոնացված տաք ջրի մատակարարման և շենքի ջեռուցման նպատակով կառուցել համապատասխան հզորության կաթսայատուն, տեղադրել անհրաժեշտ քանակի և հզորության գազի կաթսաներ
- Տաք ջրի մատակարարման նպատակով իրականացնել մետաղապլաստե խողովակների մոնտաժ
- Շենքի ջեռուցման նպատակով իրականացնել ջեռուցման համապատասխան ռադիատորների մոնտաժում ըստ տաքացվող տարածքների մեծության
- Ապահովվել շենքի ըստ նշանակության օգտագործման նպատակով այլ անհրաժեշտ օժանդակ տարածքներում տաք և սառը ջրամատակարարումը:

6. Շենքի ներքին հարդարման աշխատանքներ՝

- Շենքը ըստ նշանակության և ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով ներքին միջնապատերի մասնակի վերակառուցում
- Քարե հատակի վերանորոգում, արտաքին շերտի մաքրում, փայլեցում
- Փայտե մանրահատակի վերանորոգում, հարթեցում, լաքապատում, վերանորոգումը անհնար լինելու պարագայում նոր լամինատե հատակով փոխարինում, շրիշակների փոխարինում նորերով, հին հատակների ապամոնտաժում
- Ներքին պատերի վերանորոգում, ծեփամածուկով մշակում և հարթեցում, կոսմետիկ ներկում
- Սենյակների, դահլիճների, օժանդակ տարածքների դռների վերանորոգում, երեսապատում, լաքապատում, դրանց անհնար կամ անպետք լինելու դեպքում նորերով փոխարինում

- Դռների փակաների վերանորոգում, անհրաժեշտության դեպքում փոխարինում նորերով:

7. **Ընդհանուր աշխատանքներ՝**
   - Շենքի տարածքի և ներսի աղբի մաքրում և հեռացում
   - Շինարարական աղբի հավաքում և հեռացում
   - Ապամոնտաժված էլեկտրական լարերի, մետաղյա խողովակների, անպիտան գույքի, ապամոնտաժված սարքավորումների հավաքում և հեռացում տարածքից:

Աշխատանքների կատարման ժամկետ՝ 10 (տասը) տարի՝ Գույքը Փոխատուի կողմից Փոխառուին հանձնելու պահից սկսած:

Ֆինանսավորում՝ կատարվելու են ներդրումներ 10 տարվա ընթացքում հետևյալ համամասնություններով՝

2018թ.	**-**	**35.0 մլն դրամ**
2019թ.	**-**	**45.0 մլն դրամ**
2020թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2021թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2022թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2023թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2024թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2025թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2026թ.	**-**	**50.0 մլն դրամ**
2027թ.	**-**	**50.0 մլն դրամ**
Ընդամենը	**-**	**480.0 մլն դրամ**